№ 24 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28 — 1895 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28 № 24

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակակից Ֆրանսիան և կաթոլիկ եկեղեցին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լեոն վարդապետ Խօջայեանի թաղումը. Զկնաբուծական ընկերութիւն Թիֆլիսում. Նամակ Արմաւիրից. Նամակ Երևանից. Նամակ Կարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐԱՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պետերբուրգից.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ

—

Ահա ինչ է ասում Ֆրանսիական „La Libre Parole“ լրագիրը ժամանակակից Ֆրանսիայի մասին.

„Ա՜հաղ, ինչպիսի դարում ենք ապրում մենք և ինչ տեսակ ժողովուրդ ենք դարձել մենք: Կար ժամանակ, երբ Ֆրանսիայի երիտասարդները հանդուրժելով ամեն վտանգի, զոհելով իրանց կեանքը և գոյքը, ոգեւորված արդարութեան զգացումով, անմահ յիշատակներով, սիրահար փառքի, գնում էին կռուելու: Եւ այդպիսով, բոլոր պատերազմական դաշտերի վրա, որտեղ հաւատը, անկախութիւնը խաչված էին, բոլոր գողգոթաների ստորոտում, միշտ Ֆրանսիացի մի քանի զաւակներ արիւնաթաթախ ընկել են:

„Իսկ այժմ այդ նոյն Ֆրանսիան այլ ևս ոչ մի բանի վրա չէ մտածում. սարսափելի զաղանութիւնները տեսնելիս, այլ ևս նրա աչքերից չեն ցայտում բարկութեան կայծեր, նրա շրթունքներից չեն դուրս գալիս սարսափելի անէծքի աղաղակներ, երբ լսում է, թէ մարդիկ հազարներով անողորմ կերպով, վատաբար մորթվում են, մարտիրոսանում են և նրանց տանջանքը կոչում է անում մարդկութեանը:“

Տարակոյս չը կայ, որ ամեն մի պատուասէր Ֆրանսիացի, քաղաքակրթութեան և մարդկութեան ամեն մի անկեղծ բարեկամ այլապէս էլ չէ կարող մտածել, մանաւանդ իր կոչման բարձրութեան վրա կանգնած մամուլը, որը պարտաւոր է ամբողջ մի քրիստոնեայ ազգի հարստահարութեան խնդրի վրա նայել ոչ թէ շահասէր քաղաքականութեան, այլ լոկ քրիստոնէական մարդասիրութեան տեսակէտից: Եւ այդպէս էլ վարվում են մամուլի ազնիւ, անկաշառ օրգանները...

Բայց այլ կերպ են մտածում շանտաժիստները, որոնց համար ամեն գաղափար չափվում և կշռվում է ստացած ոսկու քանակութեամբ: Ինչպէս երևում է, այդ շանտաժիստների բանակին պատկանում է և Ֆրանսիական „L'Observateur Français“ լրագիրը, որն իր Զմիւռնիայի թղթակցի բերանով ցաւ է յայտնում, որ մի քանի Ֆրանսիական լրագիրներ հետևում են իրանց անգլիական եղբայրակիցներին և կռիւ են մղում օսմանեան կառավարութեան դէմ:

„Եթէ անկախ աղբիւրներից բղխած զեկուցումները, ասում է լրագիրը, յայտնեցին քաղաքակիրթ աշխարհին այն տխուր դէպքերը, որոնց տեսարան է հանդիսացել Բիթլիսի վիլայէթը, այդ նոյն քաղաքակիրթ աշխարհը կարող էր հաւատալ այն անձի արդարադատութեան, որին Աստուած յանձնել է օսմանեան կայսրութեան ճակատագիրը:“

Ուրեմն, լրագրի կարծիքով, օսմանեան կառավարութիւնը ոչ մի բանի մէջ յանցաւոր չէ. յանցաւոր են միայն տեղական մանր մունր պաշտօնեաները... Բայց չէ՞ տեսնում միթէ վարձկան լրագիրը, որ մինչև այսօր չը լսվեց, որ մի հասարակ գյամաղամ անգամ պատժվէր հայերի դէմ գործած անիրաւութեան համար... Եւ ոչ թէ միայն չեն պատժում չարագործներին, այլ նոյն իսկ վարձատրում են, շքանշաններ են տալիս...

Որպէս զի իր պաշտպանութեան բուն շանտաժիստական նպատակը ծածկի, Ֆրանսիական լրագիրն ահա ինչ տեսակ կեղծ հայրենասիրական զգացումներ է արտայայտում.

„Թող լաւ իմանան Ֆրանսիայում, որ յարձակվելով օսմանեան կառավարութեան վրա, Ֆրանսիական լրագիրները աջակցում են Անգլիային, որը ներկայ պարագայում զեկավարվում է միայն սեփական ձգտումներով. նա կամենում է իր հովանաւորութեան տակ առնել քրիստոնեայ հայերին և բողոքական միսիոնարների միջոցով մղել կաթոլիկ քարոզիչների գործունէութեան դէմ, և դրանով ջլատել Ֆրանսիական ազդեցութիւնը, որովհետև Ֆրանսիան կաթոլիկութեան պաշտօնական պաշտպանն է Արևելքում: Ֆրանսիական լրագիրները պաշտպանելով հայ ապստամբներին, գործում են իրանց շահերի դէմ և պատերազմ են յայտնում Լեոն XIII-րդ պապի ուխտի դէմ, որի նպատակն է միացնել բոլոր քրիստոնեաներին և մանաւանդ արևելեան եկեղեցիները հռոմէական փարախի մէջ:“

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՕՋԱՅԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Շաբաթ օր, փետրվարի 25-ին, բազմաթիւ համակրողների ներկայութեամբ, հանգուցեալ Լեոն վարդապետի համար հոգեհանգիստ կատարվեց այն համեստ բնակարանում, ուր նա վախճանվեց:—Հոգեհանգստից յետոյ, հանգուցեալի մարմինը փոխադրվեց Վանքի մայր եկեղեցին:

Կիրակի օր, փետրվարի 26-ին, Վանքում պատարագ եղաւ: Թէ եկեղեցում և թէ Վանքի բակում հաւաքված էր ահագին, սպասածից աւելի բազմութիւն, թէ ինտելիգենտ և թէ հասարակ ժողովուրդ, յայտնելու իրանց վերջին համակրութիւնը երիտասարդ վարդապետի յիշատակին: Օծման ծէսը կատարեց մեր թեմի առաջնորդը:

Դագաղը դուրս բերեցին եկեղեցուց ժամը 1-ին, և դեռ բակից դուրս չը բերած, դռների մօտ, վայր դրեցին դամբանական ճառ ասելու համար: Ճառախօսը Գօրու յաջորդ, երիտասարդ եղիշէ վարդապետ Մուրադեանն էր, որի ոգեորված ճառը յուզեց ունկնդիրներին: Մինչև Խօջիվանքի գերեզմանը դագաղին հետևում էին Ստեփանէ եպիսկոպոսը, Մուրադեան վարդապետը, և Թիֆլիսի 60 քահանաներից ընդամենը 6 քահանայ,—այն քահանաները, որոնք տասնեակներով են վազում մի որ և է վաչխառուի, կամ մի որ և է «չաղ մեռելի» առջևից... Եւ շատ լաւ էր.—ժամանակ է, որ հանգուցեալներին յարգանք արտայայտողները լինեն ժողովուրդը, և ոչ թէ վարձով գնացող տէրտէրները:—Իսկ ժողովուրդը ներկայ էր...

Խօջիվանքի գերեզմանատանը, դագաղի վրա ճառեր արտասանեցին՝ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ստեփան Լիսիցեան և հանգուցեալի երկու աշակերտները՝ Արամ Զարբքճեան և Վիկտոր Մանուէլեան:

Դագաղի վրա դրված էին հետեւեալ պսակները:

1) Նոր-Նախիջևանից. Սգաւոր բարեթեան կողմից և անդադար խուզարկութիւններ էին անում. ուստի ինքն էլ բարւոք համարեց պատճառ չը լինել նոր խուզարկութիւնների...

Երզրումում նրան լրտեսում էին. այդտեղ նա իջել էր հիւպատոսի օդնականի մօտ և հետեւեալ օրը իրան ցոյց տուին մի անծանօթ մարդ, որ ամբողջ օրը դիմացի պատի տակ կանգնած՝ դիտում էր, իսկ տանից դուրս եկած ժամանակ, հետևում էր, առանց մի ցոյց անելու: Երզրումի մէջ եղած ժամանակ, ճանապարհորդը մի հայից խնդրում է ժողով գումարել հայ վաճառականներից, որ ինքը կարողանայ մանրամասն խօսել և տեղեկութիւններ ստանալ վաճառականութեան մասին: Այդ բանը շատ դժուարութեամբ է աջողվում. մի քանի օր շարունակ յետաձգում էին, որովհետև վախենում էին, որ ժողովը նկատող չը լինի: Ապա հազիւ կարողանում են հաւաքվել և այն էլ, մի-մի հոգի էին գալիս, որպէս զի որ և է արտասովոր շարժում չը նկատվի. բացի դրանից ստիպված են լինում մի պահապան վաճառական կանգնեցնել փողոցում, որ վտանգի դէպքում իրանց իմացում տայ:

«Եւ ինչ, ասաց դասախօսը, մենք ստիպված էինք մի խոր սենեակ մտնել, գողունի կերպով, իսկ խօսածներս ինչ էր. այն՝ թէ այս ինչ ապրանքը ո՞րտեղից է ստացվում, կամ ինչ արժէ և այլն, և երբ որ և է մի չչուկ կամ ձայն ընդհատում էր մեր խօսակցութիւնը, տանտէրը դուրս էր վազում իմանալու՝ թէ արդեօք մի բան չէ պատահել, արդեօք պոլիցիան չէ գալիս կալանաւորելու իրանց: Ի միջի այլոց ես հարցրի հայերին նրանց դրութեան մասին. բոլորն էլ շատ դժգոհ էին. իբրև ապացոյց, ի հարկէ, կարող է ծառայել մեր ժողովը, ուր մենք չէինք կարողացել Պօլսում իրան խուզարկեցին. բոլոր գրքերը, որոնց մեծ մասը ֆրանսերէն էր, թղթերը, շորերը քրքրեցին, զննեցին. թէև ինքը հակառակում էր ասելով, որ ռուսահպատակ է, գնում է ճանապարհորդելու Փոքր-Ասիա՝ վաճառականութիւնը ուսումնասիրելու համար, բայց իրան լսող չը կար: Եւ երբ այդ դէպքից յետոյ դիմում է ռուսաց հիւպատոսութեան, բացատրելով գործի էութիւնը, նրան պատասխանում են,—որ դրա առաջն առնել չեն կարողանում, որ իրանք էլ չը գիտեն, թէ ինչ անեն:

«Ցաւանի է, որ Պօլսում օտարը զէնք կրելու իրաւունք չունի, բայց ես, ասաց երիտասարդ ճանապարհորդը, մի մեծ մագաղինից, որոնց թիւը բաւական շատ է Կ. Պոլսում, գնեցի ինձ համար մի ատրճանակ, որը շատ հարկաւոր էր ճանապարհորդութեանս միջոցին, ուստի ստիպված էի խորամանկութիւն էլ բանեցնել, թաղցնել, խաբել և այլն»: Պարոնը զարմանք էր յայտնում, որ մի կողմից կառավարութիւնը զէնք կրել արգելում է, միւս կողմից թոյլ է տալիս զէնքերի մագաղիններ բանալ:

Կ. Պոլսից մեկնելը շատ ուշացաւ, նախ որ թեսքերէ ձեռք բերելը ահագին ժամանակ էր պահանջում, իսկ երկրորդ՝ խոլերայի պատճառով, որ այդ ժամանակ հիւր էր Կ. Պոլսում, օրերով կարանտինայում փակված էին մնում, առանց բժշկական միջոցների: Դասախօսը բաւական ծիծաղեցրեց հասարակութեանը, երբ պատմեց թէ Տրապիզոնում նրանց ինչպէս ղեզինֆեկցիայի ենթարկեցին: «Մեզ մօտ, ասաց նա, գործ են ածում սրսկիչ և խոլերային բացիլները օչնչացնող դեղեր, իսկ Տրապիզոնում մեզ լողացրին, այն էլ մաքուր ծովի ջրով, և երկար ժամանակ ստիպված էինք զբաղվել մեր շորերը չորացնելով»:

Տրապիզոնում ճանապարհորդը նորից ենթարկվեց խուզարկութեան: Մաքսատան գլխաւոր պաշտօնեաները իրանց թոյլ էին տալիս վերին աստիճանի ծիծաղելի բաներ. օրինակ, մի պաշտօնեայ գրքերից մէկը վերցրեց և բաց անելով առաջին երեսը, երկար ժամանակ չէր կարողանում կարդալ գրքի վերնագիրը (ֆրանսերէն) և վերջը դիմում է ճանապարհորդին հարցնելով, թէ սա ինչ է նշանակում. և ստացած պատասխանով բաւականացաւ: Այդտեղ նրան նոյնպէս երկար ժամանակ պահեցին առարկելով, որ նա շորերի համար թեսքերէ չունի. ստանալով թեսքերէն՝ նա ճանապարհ է ընկնում դէպի Երզրում:

Դեռ Տրապիզոնում սկսում են նրան լրտեսել, այնպէս որ տեղական վաճառականութեան մասին նա շատ քիչ տեղեկութիւն կարողացաւ հաւաքել. ստիպված էր միշտ հայերին միայն դիմել:

Երիտասարդ ճանապարհորդը գովասանքով էր խօսում Սանասարեան վարժարանի մասին. նա այցելեց այդ վարժարանը իր առաջին ճանապարհորդութեան ժամանակ: Նրա ասելով, բոլոր սաները խօսում էին ֆրանսերէն և շատ լաւ, նոյն իսկ իրանից էլ լաւ. բոլորն էլ ընդունակ են: Նրան խընդրել են հարցեր առաջարկել և նա հարցեր է տուել աշակերտներին՝—բնագիտութիւնից, մատեմատիքայից և շատ բաւարար պատասխաններ է ստացել: Արուեստը դպրոցում լուրջ հիմքերի վրա է դրված. աշակերտների պատրաստած իրերը նրան հիացրել են. քաղաքում պտտվող օմնիբուսները աշակերտների շինածներն են: Դասախօսը ցաւ յայտնեց, որ երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ նրան չաջողվեց մտնել վարժարան, որովհետև խիստ հսկողութիւն կար կառավարութեան կողմից և անդադար խուզարկութիւններ էին անում. ուստի ինքն էլ բարւոք համարեց պատճառ չը լինել նոր խուզարկութիւնների...

Երզրումում նրան լրտեսում էին. այդտեղ նա իջել էր հիւպատոսի օդնականի մօտ և հետեւեալ օրը իրան ցոյց տուին մի անծանօթ մարդ, որ ամբողջ օրը դիմացի պատի տակ կանգնած՝ դիտում էր, իսկ տանից դուրս եկած ժամանակ, հետևում էր, առանց մի ցոյց անելու: Երզրումի մէջ եղած ժամանակ, ճանապարհորդը մի հայից խնդրում է ժողով գումարել հայ վաճառականներից, որ ինքը կարողանայ մանրամասն խօսել և տեղեկութիւններ ստանալ վաճառականութեան մասին: Այդ բանը շատ դժուարութեամբ է աջողվում. մի քանի օր շարունակ յետաձգում էին, որովհետև վախենում էին, որ ժողովը նկատող չը լինի: Ապա հազիւ կարողանում են հաւաքվել և այն էլ, մի-մի հոգի էին գալիս, որպէս զի որ և է արտասովոր շարժում չը նկատվի. բացի դրանից ստիպված են լինում մի պահապան վաճառական կանգնեցնել փողոցում, որ վտանգի դէպքում իրանց իմացում տայ:

«Եւ ինչ, ասաց դասախօսը, մենք ստիպված էինք մի խոր սենեակ մտնել, գողունի կերպով, իսկ խօսածներս ինչ էր. այն՝ թէ այս ինչ ապրանքը ո՞րտեղից է ստացվում, կամ ինչ արժէ և այլն, և երբ որ և է մի չչուկ կամ ձայն ընդհատում էր մեր խօսակցութիւնը, տանտէրը դուրս էր վազում իմանալու՝ թէ արդեօք մի բան չէ պատահել, արդեօք պոլիցիան չէ գալիս կալանաւորելու իրանց: Ի միջի այլոց ես հարցրի հայերին նրանց դրութեան մասին. բոլորն էլ շատ դժգոհ էին. իբրև ապացոյց, ի հարկէ, կարող է ծառայել մեր ժողովը, ուր մենք չէինք կարողա-

կամներից. 2) Մոսկվայից. «Անմոռանալի Լեւոն վարդապետ Խոջայեանին», Մարիամ Սմիրնովայից. 3) «Սիրելի և անմոռանալի Լեոն վարդապետին», Վաղարշապատի երիտասարդութիւնից. 4) Մոսկվայից. «Ազնիւ գործիչին՝ Լեոն վարդապետ Խոջայեանին», Գէորգ և Վառվարէ Քանանեաններից. 5) Երևանից, բարեկամներից. 6) «Անմոռանալի ուսուցչին և վարդապետին», իր աշակերտներից. 7) Թիֆլիսից. «Վաղամեռ Լեոն վարդապետ Խոջայեանին, Քրիստոսի իսկական աշակերտին», Նրան համակրող երիտասարդներից. 8) Թիֆլիսից. «Լեոն վարդապետ Խոջայեանին, արդար մարդուն և անձնուէր գործիչին», իր ընկերներից։

Խոջայեանի մահվան առիթով ստացանք հետեւեալ հեռագիրները.

Երևանից. «Ամենամեծ վշտի զգացմունքով լսեցինք մեր անմոռանալի, իր կոչման բարձրութեան վրա օրինակելի կերպով կանգնած Խոջայեան վարդապետի մահվան լուրը։ Մի այդպիսի սարսափելի վշտի մէջ միակ մխիթարութիւն է մնում մեզ համար այդ վարդապետի անմոռանալի խօսքերը, ողորմութիւնը և բարի գործերը»։ Աշակերտներ։

Երևանից. «Արտայայտելով մեր անկեղծ ցաւակցութիւնը, ողբում ենք մեր սիրելի հայր Խոջայանի անսպասելի մահը»։ — Ճեմարանի նախկին աշակերտներ։

Նոր-Նախիջևանից. «Նախիջևանի երիտասարդութիւնը, հանգուցեալ Լեոն վարդապետի հայրենակիցները յայտնում են իրանց խորին վիշտը՝ ժողովրդի ճշմարիտ սպասաւորներից մէկի մահվան պատճառով»։

Էջմիածնից. «Մեր ամենասիրելի և թանգագին բարեկամ Լեոն վարդապետի վաղահաս, և անբարեյաջող հանգամանքների շնորհով չտապեցրած մահվան լուրը մեզ բոլորիս աննկարագրելի վիշտ պատճառեց։ Ցանձնարարում ենք մեր բարեկամներին փոխարինել մեզ՝ հանգուցեալի թաղմանը։ Աղերսում ենք Ամենաբարձրեալին շնորհել նահատակ իդէալիստին միւս աւելի լաւ աշխարհում, ուր չը կան մարդկային չարութիւն և տգէտ տմարդութիւն, հանգիստ և մխիթարութիւն»։—Գալուստ Տէր Մկրտչեան, Մեսրոպ վարդապետ, Սահակ վարդապետ, Բագրատ Վարդապետեանց։

Երևանից. «Յայտնելով մեր սրտագին վիշտը թանգագին կորստի համար, խնդրում ենք հրաժեշտի խօսք ասել բազմաչարչար Խոջայեան վարդապետի թանգագին նշխարներին»։ Թեմական դպրոցի աշակերտներ։

Նոր-Նախիջևանից. «Մեզ խորին վիշտ պատճառեց երիտասարդ, համակրելի և ազնիւ Լեոն վարդապետ Խոջայեանի ողբերգական մահը»։ Զալիուշեան։

Երևանից. «Այսօր, փետրվարի 26-ին, Խոջայեանի յիշատակին հոգեհանգիստ կատարվեց, մեծ բազմութեան ներկայութեամբ։ Անանիա եպիսկոպոսը արտասանեց ոգեորված դամբանական ճառ»։

Երկէ, երբ արդէն Խոջայեան գերեզմանին էր յանձնված, ստացանք Երևանից, Յովհաննէս Նազարէթեանից 10 ռուբլի, Նրան հասցնելու համար։ Այդ փողը, ինչպէս և նախկին 193 ռուբլու մնացորդը յանձնեցինք թաղման յանձնաժողովին։ — Այդ հանգանակված փողերով էլ հոգացվել են վարդապետի թաղման ծախսերը, որը ոչինչ չունէր, որովհետև իր վերջին կօպէկները, մինչև մահվան րօպէն՝ բաժանում էր իր նախկին, անօգնական աշակերտների հետ։

Այդ նոյն աշակերտների օգտին, որոնց նիւթական ծանր վիճակը հանգիստ չէր տալիս Լեոն վարդապետին, — խորէն եպիսկոպոս Ստեփանէ նուիրել է 100 ռուբլի, ի յիշատակ հանգուցեալի։

ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կիրակի օր, փետրվարի 26-ին, ցերեկվայ ժամը 1-ին Թիֆլիսի շերամապահական կայարանի դահլիճում կայացաւ նոր հաստատված ձկնաբուծական ընկերութեան առաջին հանդիսաւոր նիստը, որին ներկայ էին հիւրեր, պաշտօնական անձեր և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ՝ ինչպէս օրինակ՝ ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանօվսկի, փոխ-նահանգապետ Տիզենհաուզէն, պետական կալուածների կառավարիչ Գամբեկեւով, Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի անդամներ՝ Քալանթար, Տարատինով և այլն։

Նիստը բացեց Եանօվսկին, յայտնելով ջերմ ցանկութիւն ընկերութեան առաջիկայ զարգացման համար։ Ապա Ն. Շավրով խօսեց ընկերութեան նպատակների և այն նախապատրաստական գործերի մասին, որ արել են նոր ընկերութեան անդամները։ Ֆ. Կովրայսկին մի մշակված, գեղեցիկ զեկուցում կարդաց, որով ծանօթացրեց այն մեծ առաջադիմութեան հետ, որ արել է գործնական ձկնաբուծութիւնը արտասահմանում և նա մանաւանդ Ամերիկայում, ուր հաստատ և խելացի կարգադրութիւններով կարողացել են թէ բազմացնել ձկների քանակութիւնը գետերի և ծովերի մէջ և թէ պահպանել ձկնի լաւ տեսակները։

Դրանից յետոյ Ստախովսկին խօսեց Սեւանի լճի ջրի մասին։ Նրա ասելով այդ ջրի մէջ կամաց կամաց աւելանում է մագնեզիայի քանակութիւնը, իսկ կրի քանակութիւնը պակասում է։ Կիրը դուրս մղվելով ջրից՝ նստում է ծովեզրեայ քարերի վրա։ Սեւանի լճի ջուրը յարմար է թէ խմելու և թէ ձկների ապրելու համար։ Եթէ ձրկների քանակութիւնը Սեւանի լճում պակասում է, այդտեղ պատճառը ջուրը չէ, այլ ուրիշ հանգամանքներ։

Ընկերութեան մի ուրիշ անդամ, Մրեվլով, կարդաց մի զեկուցում Արագվա գետի ձկների և նրանց որսալու մասին։ Այդ գետում ապրում են 15 տեսակ ձկներ։ Արագվայի ձկները, համեմատած Կուրի ձկների հետ, աւելի փոքր են, կարծէք՝ աւելի չոր և բաց գոյնի։ Արագվայի ձուկը չէ սիրում Կուրի ջուրը և ընդհակառակը։ Ձուկ որսալու համար տեղական բնակիչները գործ են ածում մօտ 8—9 տեսակ առանձին միջոցներ։ Զեկուցանողը նկարներով և իրերով ցոյց տուեց ձկնի տեսակները և որսալու գործիքները։

Ն. Շավրով զեկուցեց Նոր Աֆոնի վանքի ձրկնաբուծութեան մասին։ Այդ վանքի կառավարիչները կարողացել են մաքրել ճահիճը և այնպէս յարմարեցնել, որ ձկները կարողանան ապրել, և հասել են աչքի ընկնող հետևանքների։ Նոյնը կարելի է անել և ուրիշ տեղերում, ուր գետակները վերջանում են ճահիճներով։

Նիստը վերջանալուց յետոյ, հիւրերը իջան շերամապահական կայարանի ներքին յարկը, ուր ծանօթացան արհեստական ձկնաբուծութեան հետ։ Առանձին գործիքների միջոցով աճեցնում, մեծացնում են ձուկը նրա ձուերից և երբ նա բաւական զարգացել է, ածում են լճերը, ծովերը, ուր նրանք զարգանում են և բազմանում։

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՒԻՐԻՑ

Փետրվարի 23-ին

Երկու օր առաջ մի առանձին թղթակցութեամբ հաղորդեցինք Վեհափառ Կաթողիկոսի մուտքը Արմաւիր։ Հարկաւոր ենք համարում այժմ հաղորդել էլի մի քանի հետաքրքրական մանրամասնութիւններ։

Փետրվարի 22-ին, չորեքշաբթի օր, Կաթողիկոսը այցելեց հայոց եկեղեցին։ Ժողովուրդը նախօրօք իմանալով այդ մասին, մեծ բազմութեամբ հաւաքվել էր թէ իջևանած տան և թէ եկեղեցու առաջ։ Ցերեկվայ ժամի 11-ին Վեհափառը դուրս եկաւ և ուղևորվեց եկեղեցի։ Բազմութիւնը ընդունեց իր հոգևոր հօրը կեցցէներով։

Կարճ մաղթանքից յետոյ Վեհափառը նստեց կառքի մէջ և մեծ բազմութեան ուղեկցութեամբ գնաց տղայոց և օրիորդաց ուսումնարանները, և բաւական ժամանակ մնաց ուսումնարաններում։ Աշակերտուհիներից մէկը ճառ կարդաց, որով շնորհաւորում էր Վեհափառի մուտքը։ Երբ ճառը վերջացաւ, Վեհափառը օրհնեց աշակերտներին և աշակերտուհիներին և դառնալով դէպի ժողովուրդը՝ բացատրեց ուսումնարանների նշանակութիւնը և հրաւիրեց բոլորին, որ աշխատեն ուսում տալ իրանց զաւակներին։

Այդտեղից հայոց Կաթողիկոսը այցելեց տղայոց միւս դպրոցը՝ «երկդասեան ուսումնարանը», և այնտեղ էլ մօտ մէկ ժամ մնալուց յետոյ, վերադարձաւ իր բնակարանը։ Վեհափառը իր քարոզի մէջ ասեց հետևեալ խօսքերը. «Կը մաղթեմ առ Աստուած, որ հաստատ պահէ Էջմիածնի աթոռը, իսկ ձեզ՝ արմաւիրցիներիդ խնդրում եմ աչխատէք, որ եթէ միւս անգամ դամ Արմաւիր, դուք բոլորդ էլ հայերէն խօսէք» (արմաւիրցիները չէրքէզերէն են խօսում)։

Շաբաթ օր, փետրվարի 25-ին, Ամենայն հայոց Կաթողիկոսը այստեղից ուղևորվելու է Նոր-Նախիջևան։

Խ. Տ.-Ց.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 19-ին

Վերջապէս այսօր, Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, չորրորդ նիստ ունենալուց յետոյ, հաղիւ կարողացաւ իր պարապմունքները վերջացնել։ Բոլոր նիստերը տեղի ունեցան քաղաքային տան դահլիճում։

Յունվարի 22-ի առաջին նիստին մասնակցում էին 40 անդամներ։ Նախ ընտրվեց ընդհանուր ժողովի նախագահ—Վ. Եղիազարեանց և քարտուղար—Ց. Յովհաննէսեանց։ Այս վարչութեան անդամներից մէկը կարդաց 1894 թուականի հաշիւը, որից երևաց, որ ընկերութիւնը անցեալ տարում ունեցել է մուտք 7869 ր. 51 կ., չը հաչելով գրադարանի և Ալի Քիւչակի դպրոցի անունով պահված 1814 ռուբլին։ Մուտքի ամենամեծ մասը՝ 6315 ր.—51 կ., ստացվել է սովեալների օգտին։ Այդ դումարից՝ 1158 ր. 26 կ. մնացել է սովեալների օգտին տրված պարահանդէսից, իսկ 5157 ր.—25 կ., ստացվել է ընկերութեան խորհրդից, «Մշակի» խմբագրութիւնից և զանազան քաղաքներից։ Նպաստ տրվել է սովեալներին ցորենով ու փողով 5022 ր.—46 կ.։ Ուրեմն սովեալների փողից անգործադրելի է մնացել 1293 ր. 65 կոպէկ։

Հաչուի ընթերցումից յետոյ լինելու էր և վարչութեան անդամների ընտրութիւն, սակայն ընդհանուր ժողովը լսելով մի երկու ժողովականների մեղադրանքները վարչութեան մի քանի օրինականում, նոյն իսկ երկրի տնտեսութեան մասին ազատ խօսել։ Ում վրա մի փոքր կասկած է ընկնում, իսկոյն բանտ են նստեցնում, ծեծում, սպանում, էլ չենք խօսում թալանումների մասին, որ անպակաս է»։

Ապա դասախօսը մի փոքր խօսեց Փոքր-Ասիայի քիւրդերի մասին ասելով, որ նրանք առաջ այդքան սանձարձակ չէին, որ կառավարութիւնը տալով նրանց ձեռքը զէնք՝ մի նոր պատուհաս պատրաստեց թէ իր և թէ մանաւանդ խեղճ հայերի համար, որոնք զէնք կրելու իրաւունք չունեն։ Այն միտքը յայտնեց, որ հայոց գիւղերը անհամեմատ լաւ են քրդական և թրքական գիւղերից, ժողովուրդը աչխատասէր է, ընդունակ, բայց շատ հարստահարված։ Որ գիւղը մտնում էր՝ միշտ գանգատ էր լսում կեանքի անապահովութեան, թալանումների, սպանութիւնների, կանանց բռնաբարութեան և այլ այդպիսի դէպքերի մասին։

Ղարա-Զոպան գիւղում նա իջևանում է հայ քահանայի տանը և շատ սիրով ընդունվում է։ Քահանայի տանը հաւաքվում է համարեա ամբողջ գիւղի հայ հասարակութիւնը։ Դրանց մէջ լինում են երկու հոգի, որոնք ռուսերէն գիտէին և հասկանալի է, ճանապարհորդը չափազանց ուրախանում է։ Ռուսերէն իմացողները դառնում են թարգման և նա սկսում է հարց ու փորձ անել. ամենքից էլ առաջվայ գանգատներն է լսում և ամեն տեղ ասում էին թէ «երբ պէտք է դան ռուսները մեր երկիրը»։

Սակայն այդ խօսակցութիւնը երկար չէ տեւում. զարթիան, որին իբրև թէ հեռացրել էր սենեակից, շարունակ դուռը բաց էր անում և լսում. քահանան հասկանում է, որ կարող է դրանից մի վատ բան դուրս գալ, պատիրում է, որ ամբոխը ցրվի. և խեղճ ծերունին, ասաց ճանապարհորդը, ատամները կրճատցնելով, նայում էր վրաս ու ողբում իրանց դրութիւնը։ Հետևեալ առաւօտ զարթիան շատ էր կոտրատվում, ըսպառնում էր մատնել կառավարութեան, բայց ինչպէս միշտ, կաշառքը նրա բերանը փակեց և խեղճ հայերը ստիպված էին նրա սիրտը շահել ու մի կերպ ինձ ճանապարհ դնել։

Առհասարակ ճանապարհորդին զարմացրել է քրդերի ունեցած հայեացքը կառավարութեան վրա. նրանք արհամարհանքով են վերաբերվում դէպի թիւրքաց կառավարութիւնը։ Այդ բանը նա զարմանալով պատմում է Մելէզկերտի գայմագամին. գայմագամը ամեն կերպ աչխատում է հերքել այդ։

Մելէզկերտում ճանապարհորդը շատ անհամութիւնների է հանդիպում կառավարութեան կողմից. նրան ուղեկցող քուրդը տանում իջեցնում է մի հարուստ հայի տուն. հայը շատ սիրով ընդունում է և սկսում է հիւրասիրել, խօսել, պատմել և այլն։ Բայց յանկարծ ներս է մտնում մի զինուոր և յայտնում, որ գայմագամը առաջարկում է գնալ մի քուրդի տուն, որ աւելի լաւ է, աւելի յարմար է և այլն։ Ճանապարհորդը հրաժարվում է այդ «սիրալիր» առաջարկութիւնից, առարկելով, որ ինքը գոհ է իր դրութիւնից։ Սակայն զինուորից յետոյ գալիս է օնբաշին (տասնապետ), ապա երկրորդը և երրորդը, ուստի նա էլ ստիպված է լինում ենթարկվել, հրաժեշտ տալ հայ տանտիրոջ և հետևել իր անկոչ ուղեցոյցներին։ Բայց որքան է զարմանում, երբ նրան բերում են մի գոմ և խնդրում ներս մտնել։ Նա ընդդիմանում է, բարկանում է. նրան տանում են գիւղի ծայրին գտնվող մի նոր շինութիւն, որ դեռ պատրաստ չէր, պատուհաններ չունէր, խոնաւ էր, մինչդեռ դուրսը ցուրտ էր։ Այդ տանից էլ դժգոհ մնալով, ճանապարհորդը սկսում է սպառնալ, որ կը գրէ հիւպատոսին, կը հեռագրէ և այլն. հաղիւ հաղ գիջանում են ու հրաւիրում են գայմագամի մօտ. գայմագամը ներողութիւն է խնդրում, ասելով որ ինքը չէ իմացել, թէ ով է եկողը։ Ճանապարհորդը անկասկած իսկոյն հասկանում է, որ գայմագամը այդ անում է միջոց չը տալու համար, որպէս զի նա կարողանայ հայերի հետ յարաբերութիւն ունենալ և նրանց բողոքները լսել, նիստ ու կացին ծանօթանալ, նրանցից տեղեկութիւններ հաւաքել երկրի դրութեան մասին և այլն։

Ցիշելով Վարազի վանքի մասին, ճանապարհորդը անցաւ Վան քաղաքին. Վանում նա այցելեց վալի փաշային, որը կիսաեւրօպացու տպաւորութիւն էր թողնում։ Երբ երիտասարդը յայտնեց իր մտադրութիւնը, վալին յայտնեց, որ աւելորդ է նեղութիւն քաշել գնալ գիւղերը տեղեկութիւններ հաւաքելու համար, քանի որ այդ բոլորը ինքը կը կատարէ, մի խօսքով արդելեց շըփվել ժողովրդի հետ։ Քաղաքում նրան ուղեկցում էր մի պոլիցիական, որը բաւականին խանդարում էր հայ վաճառականների հետ խօսելու, այնպէս որ հայ վաճառականները ակնարկներով էին խօսում նրա հետ։

Եզրակացնելով իր տպաւորութիւնները, դասախօսը հայերի մասին այն կարծիքը յայտնեց, որ նրանք անհամեմատ բարձր են թէ թիւրքերից և թէ քիւրդերից, ընդունակ են և ներկայացնում են իրանցից մի կուլտուրական ազգ։ Ապա աւելացրեց, որ հայերը շատ ճնշված են, որ նրանց մէջ տիրում է ընդհանուր ատելութիւն դէպի կառավարութիւնը, որ ներկայ սարսափներին նա անպայման հաւատում է, որովհետև ինքը լսել է և փաստերով համոզվել. «Ես, ասաց դասախօսը, շարունակ բողոքներ լսելով, մի տեղ դիմեցի հետևեալ հարցով. «Ցուէք ինձ ապացոյցներ, որ հաւատամ»։—Այն ժամանակ դառնացած ինձ պատասխանեցին. «Ապացոյցներ էք ուզում. բայց միթէ չէք տեսնում, որ ամեն օր միևնոյն բաները կըրկնվում են. Վանի վիլայէթում չը կայ մի գիւղ, որ աւարի մատնված չը լինի, օր չէ անցնում որ կին չը բռնաբարվի, աղջիկ չառևանդվի, մարդ չը սպանվի» և ես հաւատացի, երբ ինձ անթիւ օրինակներ բերին, որոնց ես մի առ մի արձանագրել եմ, բայց, տարաբաղդաբար, ժամանակը չէ ներում, որ գոնէ այդ բոլորի մի աննշան մասը հաղորդեմ այս զեկուցման մէջ»։

Դասախօսութիւնը ընդունվեց երկար ծափահարութիւններով։ Պարոնը խնդրել էր, որ թոյլատրեն կարդալ ամբողջ բեֆերատը, բայց դա անկարելի եղաւ ժամանակի սղութեան պատճառով։

Զը նայելով որ մուտքը ձրի էր, այնու ամենայնիւ դասախօսութեանը ներկայ հասարակութիւնը շատ էլ բազմաթիւ չէր. ներկայ եղողների մէջ նկատվում էին բաւականին հայ ուսանողներ, և հայ կօլոնիայից մի քանի հոգի։

Պ. Միկլաչևսկին մտադիր է իր բէֆերատը տպագրել, ուստի մենք բաւականանում ենք այս քաղուածքներով. գուցէ կարելի լինի, դասախօսութիւնը տպելուց յետոյ, աւելի մանրամասն կերպով «Մշակի» էջերում կանգ առնել նրա բովանդակութեան վրա։

Նիկ. Սաթ.

զանցութիւնների վերաբերմամբ, անդամների ընտրութիւնը յետաձգեց յաջորդ նիստին, երբ վերաքննիչ յանձնաժողովը իր պարապմունքները վերջացրած կը լինի։ Ուստի վերաքննիչ յանձնաժողովի համար երեք անդամներ ընտրելով, ժողովը իր նիստը փակեց։

Փետրվարի 5-ին տեղի ունեցաւ երկրորդ նիստը, մասնակցութեամբ 33 անդամների։ Այդ նիստին քննիչ յանձնաժողովը կարդաց իր զեկուցումը, մի զեկուցում, որը կազմված էր օրինակելի անկողմնապահութեամբ, ինչպէս մի քանի անգամ նկատեց նախագահը։ Ընդհանուր ժողովը, քննելով այդ զեկուցումը, գտաւ, որ ծախսված փողերի համար պակասում են փաստաթղթեր և ստացագրեր, որ հաշիւների մէջ կան թերութիւններ ու մի երկու սխալներ, որ խորհրդին հասանելի գումարը չէ ուղարկված, որ ընդհանուր ժողով իր ժամանակին չէ հրաւիրված և վերջապէս վարչութիւնը սովեալներին ցորեն բաժանելու ժամանակ իր հետ չէ տարել ընդհանուր ժողովի կողմից ընտրված մարդուն, մինչդեռ այդ հարցը մի առանձին ժողովի նիւթ է դարձել, և ընդհանուր ժողովը իր ժամանակին պնդել է իր որոշման վրա և այլն և այլն. այս բոլորը ի նկատի ունենալով, ընդհանուր ժողովը նախ շնորհակալութիւն յայտնեց վարչութեանը իր գործունէութեան համար և ապա ցաւ յայտնեց վարչութեան ապօրինութիւնների համար։

Ահա այս փաստերն էին այն անախորժ աղմուկների պատճառը, որ տեղի ունեցան այդ ժողովում, որոնց մասին, սակայն, չարժէ խօսել...

Փետրվարի 12-ին, երրորդ նիստին, ներկայ էին 27 անդամներ. բարեկենդանի պատճառով շատերը չէին եկել, բայց որովհետև խորհուրդը հեռագրով պահանջել էր նախահաշիւը, ուստի զբաղվեցին նախահաշուի քննութեամբ և մի քանի փոփոխութիւններով հաստատեցին նախահաշիւը։

Վերջապէս, չորրորդ նիստը տեղի ունեցաւ փետրվարի 19-ին, մասնակցութեամբ 38 անդամների, որտեղ նախ կարդացվեցան անցեալ ժողովների արձանագրութիւնները, և ապա վարչութեան մնացած երկու անդամները հրաժարական տուեցին, որից յետոյ ձեռնարկեցին ընտրութիւններին։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեցին վարչութեան անդամներ՝ Գ. Տէր-Խաչատրեանց, Ա. Աթանասեանց, Գ. Խանաղդեանց, Գ. Աղօեանց և Ե. Տէր-Սահակեանց, իսկ անձնափոխանորդներ՝ Մ. Ճաճիկեանց, Գ. Ահարոնեանց և Ց. Աղիզեանց։ Նիստի վերջում ընդհանուր ժողովը շնորհակալութիւն յայտնեց նախագահին՝ ժողովները լաւ կառավարելու համար։

Ականատես

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Փետրվարի 20-ին

Սովորականից աւելի ուրախ էր բարեկենդանը Կարսում այս տարի. երեք անաջող, անբերրի տարիներից յետոյ Կարսը վերջապէս այս տարի չունչ քաշեց։ Հացի առատութիւն էր։ Մկրտումեանների ցրված Ռուսաստանի ցորենը, որի գնի բարձր լինելու մասին յիշել էինք իր ժամանակին, այնպիսի մի չը տեսնված բերք տուեց, որ շատերը այդ ցորենից պահել էին նոր ցանքի համար։ Առևտուրը կենդանութիւն ստացաւ։ Լաւ գործ ունէին մանուֆակտուրիստները, նոյնպէս մեծ քանակութեամբ կտաւեղէն էր ծախվում և դա ապացոյց էր, թէ որքան գիւղական ժողովուրդը ամենաանհրաժեշտ հագուստեղէնի կարիք ունէր այս երեք տարիների ընթացքում։

Բարեկենդանին Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը մի երեկոյթ տուեց. թողնելով խօսելու երեկոյթի աջողութեան մասին, մենք կը ցանկանայինք մի նկատողութիւն անել, որ մեր հասարակութիւնը շատ տգեղ է պահում իրան այդպիսի տեղերում. օրինակ, ինչ կասէք այս դէպքի մասին.—մի պարոն, որի կօշիկը երեի նեղում է եղել ոտքը, կօշիկը հանել ձեռքին բռնել և ման էր գալիս դահլիճում. մի ուրիշը ձգվել էր աթոռի վրա և ոտքերը պարզել՝ անցնողներին ճանապարհ չը տալով. մի երրորդը առանց տոմսակի ներս էր մտել և երբ կառավարիչը նկատողութիւն էր անում, սկսում էր գորգռալ, որ Նրան կը ծեծի և այլն. և վերջապէս ի լրումն ամենայնի՝ կլուբի բուֆետչիկ հաջի Սարօն էլ ինչ որ խորոված ի յայտարարութիւն էր կախել դահլիճի պատին «Карсъкябаби порци трицидъ копикъ»։ Շատ լաւ, ասենք պօրցիան «трицидъ копикъ», «կարսքեաբաբին» էժան է, բայց ախար, Հաջի աղա, կլուբի դահլիճում այդպիսի յայտարարութիւն կախելը ամօթ է. հօ լուլաքեսաբաչու խանութ չէ կլուբի դահլիճը։

Սբ. Ապ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 25-ին, Արմաւիրից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Այսօր, փետրվարի 25-ին, կաթողիկոսը ճանապարհ ընկաւ դէպի Նոր-Նախիջևան։»

—

Ամենայն հայոց Կաթողիկոսի ընդունելութեան մասին Նոր-Նախիջևանից, մեր թղթակցից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Այսօր, փետրվարի 26-ին, առաւօտեան 11 ժամին Վեհափառ Կաթողիկոսին դիմաւորեցին Բոստովի կայարանում՝ ատամանի օգնականը, շրջանային կառավարիչը, մնացած իշխանութիւնները և Բոստովի, Նախիջևանի, Ցագանրօգի, Նովոչէրկասկի, Այսկի 16 հասարակութիւնների և դասակարգերի ներկայացուցիչները աղ ու հացով՝ արծաթէ սկուտեղների վրա։ Եղանակը հրաշալի էր։ Վեհափառին ուղեկցում էին զինուորական պահնակախումբը, բազմաթիւ կառքեր և ձիաւորներ։ Վեհափառը հանդիսաւոր կերպով անցաւ գեղեցիկ շինած յաղթական կամարի տակով՝ դէպի Նախիջևան։ Եկատերինէ Կայսրուհու արձանի մօտ հանդիսաւոր ընթացքը կանգ առաւ։ Վեհափառ Կաթողիկոսին ամպհովանու տակ առնելով՝ ոգեորված կեցցէներով առաջնորդեցին դէպի Գրիգոր Լուսաւորչի տաճարը։ Իր քայլերը ուղղելով ծաղիկներով ծածկված ճանապարհով դէպի սեղանը, Վեհափառը աղօթեց և այնտեղից գնաց Կրասիլնիկովի չքեղ զարդարած տունը։ Հազարաւոր ամբոխը ոգեորված կերպով ողջունում էր Կաթողիկոսին, որը օրհնում էր ժողովրդին։ Տները զարդարված են դրօշակներով, մագաղինները փակված են. լուսաւորութիւն կը լինի։»

—

«Շաւիղ» շաբաթաթերթը հաղորդում է, որ շուտով Թէհրանում կը սկսի հրատարակվել մի նոր ամսագիր՝ «Աստղ Արեւելեան» անունով։ Նոյն լրագիրը լսել է, որ մի խումբ երիտասարդներ մտադիր են Թաւրիզում էլ հրատարակել մի նոր թերթ։

—

Կիրակի օր, փետրվարի 26-ին, գումայի դահլիճում տեղի ունեցաւ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի շարունակութիւնը։ Այդ ժողովը բացառապէս զբաղվեց ընտրութիւններով։ Պէտք է ընտրվէին 18 պաշտօնատար անձինք, այն է ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, խորհրդի չորս անդամ և չորս փոխ-անդամ, վերաստուգող յանձնաժողովի երեք անդամ և գրադարանական մասնաժողովի հինգ անդամ։ Ձայների առաւելութեամբ ընտրվեցին՝ ընդհանուր ժողովի նախագահ՝ բժ. Բ. Նաւասարդեան, որ միակ քուէարկվողն էր այդ պաշտօնի համար և վերընտրվեց։ Ընդհանուր ժողովի քարտուղարի պաշտօնից հրաժարվեց նախկին քարտուղար Խ. Մալումեան. քուէարկվեց Ս. Մալխասեան և ընտրվեց։ Խորհրդի անդամներ վերընտրվեցին՝ Ա. Անանեան, Բ. Մէլիք Ղարագեօզեան, Ց. Սպէնդիարեան. ընտրվեց նոր անդամ՝ Փ. Վարդապետեան։ Փոխ-անդամներ ընտրվեցին՝ Ա. Տէր-Գրիգորեան, Խ. Մալումեան և Ց. Տէր-Սարգսեան։ Վերաստուգող յանձնաժողովի անդամներ վերընտրվեցին՝ Ա. Վարդապետեան, Լ. Տիգրանեան և Ց. Ստեփանեան։ Գրադարանական մասնաժողովի անդամներ վերընտրվեցին՝ Ս. Մալխասեան, Ց. Քոչարեան, Ս. Բալաղեան. ընտրվեցին նոր անդամներ՝ Ա. Երիցեան և Լ. Մանուէլեան։

—

Լսում ենք, որ Ամենայն հայոց Կաթողիկոսը գնալու է Մոսկվա։

—

Ստացանք Զիկագոյից մի շատ փոքրիկ երաժշտական գրուածք, «Սասուն» անունով։ Բառերը պատկանում են Քրօվտսին, իսկ ձայնագրողն է Ն. Գաբրիէլ։ Դա մի երգ է, դաշնամուրին յարմարեցրած։

—

Մեր խմբագրութեանը ուղարկված է ունդարերէն լեզուով մի շքեղ պատկերազարդ հրատարակութիւն Sramosujvar, Jrasban es Képekben անունով, որ լոյս է տեսել 1893 թուականին։ Գրքի մէջ նկարագրված են Ունդարիայի հայկական գաղթականութեան աչքի ընկնող հաստատութիւնները, պատմված է նրա անցեալը, ներկայացված է նրա այժմեան վիճակը։ Հաստատութիւնների, եկեղեցիների և զանազան ունդարահայերի պատկերները դուրս են բերված շատ աջող կերպով։

—

Մեզ հաղորդում են, որ շաբաթ օր, մարտի 4-ին, Թիֆլիսի ժողովարանում ինժենէր-ագրօնոմ Գ. Մեծատուրեան կարդալու է մի դասախօսութիւն։ Դասախօսութեան նիւթն է՝ միկրօբների կատարած դերը բուսական և կենդանական թագաւորութիւնների մէջ և Պաստէորի աշխատութիւնները։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ամսիս 23-ին անձնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին մի երիտասարդ, Միքայէլ Սափարեան։ Նա Նուխեցի էր, 28 տարեկան, և ծառայում էր Գանձակի պօստ-հեռագրատանը։ Սպանվածին թոկից կախված գտան գոմում։ Անձնասպանութեան պատճառը, ինչպէս ասում են, մելամաղձոտութիւնը և տնային նեղ հանգամանքներն էին»։

—

ՍԱՋԻԷՐԷԹ գիւղից մեզ գրում են. «Փետրվարի 9-ին մեծ հանդիսով կատարվեց Վարդանանց տօնը։ Եկեղեցում երգում էր դպրոցի նորակազմ երկսեռ խումբը։ Պատարագից յետոյ Տէր-Գաբրիէլեան քահանան մի սրտաբուղխ քարոզ խօսեց, որով բացատրեց Վարդանանց տօնի նշանակութիւնը. ապա ժողովուրդը խուռն բազմութեամբ հաւաքվեց ուսումնարանը։ Աշակերտները և աշակերտուհիները կարդացին զանազան ոտանաւորներ, որոնք ընդմիջվում էին զանազան երգերով։ Հանդիսի վերջում ուսուցիչ Սահաթեան բացատրեց այդ օրվայ նշանակութիւնը։ Ժողովուրդը շատ գոհ մնաց թէ աշակերտներից և թէ ուսուցչից։ Չը պէտք է մոռանալ, որ սրանք այն աշակերտներն են, որոնք երկու տարի առաջ դաղափար անգամ չունէին մայրենի լեզուի մասին։ Շնորհակալութեան արժանի է հոգաբարձու Ենովք խօջայեան, որը մեծ ջանք է գործ դնում ուսումնարանի առաջադիմութեան համար։ Այս առիթով չենք կարող չը յիշել հանգուցեալ Գրիգոր Արծրունուն, որովհետև նրա շնորհումն է, որ այստեղ ուսումնարանը գոյութիւն ունի. բացի դրանից, նա եղաւ գլխաւոր միջնորդը Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան առաջ, որը ընդ միշտ տարեկան 300 ր. նպաստ յատկացրեց դպրոցին։»

—

ՄԵԾ-ՇԱՀՐԻԱՐ գիւղից մեզ գրում են. «Ամսիս 18-ին Երուանդեան դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ մանկական թատրոն. խաղացին «Գազանանոց», կամ «Կեռասի գողեր» կատակերգութիւնը։ Դահլիճը լի էր հանդիսականներով։ Ներկայացումից յետոյ, որ տեւեց մի ժամ, աշակերտները կարդացին ոտանաւորներ, իսկ երգեցիկ խումբը մէջ ընդ մէջ երգում էր զանազան ժողովրդական և ազգային երգեր։ Երեկոն աջող անցաւ, թողնելով գիւղացիների վրա ախորժելի տպաւորութիւն։ Ստացած արդիւնքը դպրոցի վարչութիւնը մտադիր է գործ դնել նոր գրքեր գնելու և հիմնելու գրադարան։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը ուղարկել է մեզ տպագրելու հետեւեալը. «Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել վարչութեանս խորին շնորհակալութիւնը տեղական թատերասէրների խմբին, որ յունվարի 29-ին, յօգուտ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Վաղարշապատի ճիւղի, ներկայացրին «Դարընապետ» կոմէդիան և «Կրէթ-Կրէթ» վոդէվիլը։ Նոյնպէս յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը տ. Եղեկեանին, որ ոչ թէ միայն աջակցեց ներկայացման աջողութեանը, այլ և ուրախութեամբ յանձն առաւ կառավարել բուֆէտը։ Ներկայացումից զուտ արդիւնք մնաց 59 ր. 6 կ.։ Չենք կարող լռութեամբ անցկացնել տեղական երկսեռ դպրոցների հոգաբարձութեան այն կարգադրութիւնը, որով արգելել է դպրոցի դահլիճում Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ժողովներ կազմելու, այն ինչ, որպէս դպրոցը, նոյնպէս և Բարեգործական ընկերութեան ճիւղը նոյն հասարակութեանն են պատկանում, եթէ չասենք, որ ընկերութեանս տարեկան մուտքի մեծ տոկոսը ծախսվում է նոյն դպրոցների չքաւոր աշակերտների և աշակերտուհիների վրա»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Զալթր գիւղից մեզ գրում են. «Փետրվարի 9-ին, Վարդանանց տօնի օրը, մեր գիւղի երկդասեան ուսումնարանում, ուսուցիչների նախաձեռնութեամբ, հանդէս կատարվեց։ Ուսումնարանի դահլիճը լի էր երկու սեռի ահագին բազմութեամբ։ Ուսուցիչներից մէկը խօսեց տօնի առիթով, ապա աշակերտները և աշակերտուհիները հերթով կարդացին Վարդանանց տօնին վերաբերեալ ոտանաւորներ։ Վերջում ուսուցիչներից մէկը բացատրեց հանդէսի նպատակը. հանդէսին ներկայ էին նաև մերձակայ գիւղերից ժողովուրդ։ Զալթրում այս առաջին անգամն է, որ կատարվում է Վարդանանց տօնի առթիւ հանդէս»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԹԻԱՑԻՑ

Տրապիզոն, փետրվարի 11-ին

Ծանօթ սրիկայ Բապիոս օղլի Շաքիր էֆէնդին գինով վիճակի մէջ նստած կըլլայ լուսավառուած պարտէզներուն դիմացը գտնուող սրճարանի մը առջև։ Ցանկարծ յիշեալին վեց հարուածեանէն քանի մը փամփուշտներ կը մեկնին, և ահա ճիշդ նոյն ժամանակն ալ վալին կառք մը նստած կանցնէր ատկէ։ Ցուղում առաջ կուգայ. արդեօք հարուածները վալիին ուղղուած էին։ Վալին անմիջապէս կառքը կեցնել կուտայ և քանի մը խիստ ածականներ շռայլելով յանցաւորին՝ կը հրամայէ զայն ձերբակալել։ Շաքիրը կը զգայ իր արած սխալ քայլը, կը պաղատի վալիին որ ներէ իրեն. վալին մտիկ չընելով կառքը վարել կուտայ։ Իր հրամանը գործադրուեցաւ—սրիկան ազատ մնաց, միշտ կը մնայ ու պիտի մնայ։ Կըսուի թէ վալին ուզեց զայն չի ձերբակալելով խնդիրը խեղդել, որպէս զի խնդիրը չը կերպարանափոխուի ու դուրսերը ձայն չի տարածուի թէ՝ տաճիկ մը իսկ իր վալիին սպաննելու փորձ կընէ...

Անտին էչրէֆ էֆէնդին, ազդեցիկ թիւրք մը, լուսազարդած է սրճարանի մը առջևը, ուր հրթիռներ ու հրացաններ կարձակուին։ Մոռացանք ըսելու որ վալին արգելած էր հրացանաձգութիւն անելը և հրամայած՝ հակառակ վարուողին ձերբակալել։ Ոստիկանապետ Ճաֆէր էֆէնդին անկէ անցած պահուն կը հրամայէ խուժանին ցրուիլ և մանաւանդ՝ հրացանաձգութեան վերջ տալ։ Էչրէֆ էֆէնդին առաջ կուգայ և կըսէ թէ՝ ես եմ ընել տուողը և պատասխանատուն։ Ոստիկանապետը կըսէ, թէ ով որ ալ ըլլայ՝ պէտք է որ հնազանդի և հրամանը գործադրէ։ Էչրէֆը կը բարկանայ և կըսէ թէ՝ սուլթանը փառաւորելու համար է հրացանաձգութիւնը և թէ ոչ ոք կրնայ ատիկա արգելել։ Ճաֆէրն ալ կը բորբոքի և կը մօտենայ միւսին հանգցնելու համար իր կարողութեան չափը. նա ալ արդէն մօտեցած կըլլայ և կը սկսի ծեծկտուքը. բաւական իրար կը հրմշտկեն, այնպէս որ Էչրէֆին մուշտակը նոյն իսկ վերէն վար կը պատռի. այդ կէտին հասած էին՝ երբ պահակներ ու քիչ շատ ծանօթ մարդիկ կը հասնին ու իրարմէ կը զատեն։

Էչրէֆը նոյն վիճակին մէջ կերթայ ուղղակի գանգատ ու վալիին ցոյց տալով իր զրութիւնը՝ կըսէ երեսն ի վեր «սիզ օլտընըզ սէպէպի, սիզ եաբտըրտընըզ» (դուք եղաք պատճառը, դուք ընել տուիք)։ Վալին եղելութեան վերահասու կըլլայ և կըսէ. «Բայց դուք և ձեզի պէսներ պատճառ եղաք ու կըլլաք, որ այդ սրիկան միշտ իր պաշտօնին վրա մնացած է ու կը մնայ», այսինքն Ճաֆէրը պաշտպանուած ըլլալուն համար ինք անկարող եղած է զայն պաշտօնանկ ընել։ Բայց այս դէպքը բաւական զօրաւոր ու ակնյայտ էր անոր պաշտօնանկութիւնը փութացնելու։

Հետեւեալ օրը Ճաֆէր էֆէնդին տեղւոյս ոստիկանապետութենէն պաշտօնանկ եղած էր ու առաջարկուած իրեն, որ նոյն պաշտօնով Սամսօն գնայ։ Ճաֆէրը յանձն չէ առած գնալ հոն, ուր իրմէ ստորադաս եղող մը, Սալէհ էֆէնդի, կը վարէ այդ պաշտօնը—ատիկա ամօթ համարելով, և խնդրած է վալիին, որ իրեն յանձնարարական մը տրուի, որպէս զի Պոլիս երթալով՝ ուրիշ գաւառական քաղաքի մը ոստիկանապետ կարգուի։

Եւ այդ տեսակ անկարգութիւնները բացառութիւններ չեն, այլ սովորական, ամեն օր կրկնվող։

Գ—ին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի։ Տարուսում քննվում է, փակ դռներով և երդուեալ դատաւորների մասնակցութեամբ, խլիատովեան աղանդի գործը։ Մեղադրվողները 20 հոգի են, վկաները—130։

ՍՕՖԻԱ, 25 փետրվարի։ «Սոգլասիէ» լրագրում տպված է Բէնդէրեվի նամակը Յանկովին, որով խորհուրդ է տալիս վերջինին դադարեցնել ամեն տեսակ ջանքեր և յոյսը կարել, որ պրինց Ֆերդինանդը կը ճանաչվի Ռուսաստանի կողմից, մինչև որ պրինցը ռուսական մինիստրութիւն չի նշանակի։

ՄԱԴՐԻԴ, 24 փետրվարի։ Երէկ Կուբա կղզու վրա գեներալ Գարիչ յարձակում գործեց Լոսնէգրոս քաղաքի վրա և գրաւեց ապստամբների բանակը, զէնքերը և դրօշակը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի։ «Свѣтъ» լրագիրը հաղորդում է, որ Ռիգայում հիմնվում է ռուսաց ժողովրդական գրադարան Կայսր Ալէքսանդր III-ի, Պրիբալտեան երկրի վերանորոգչի անուան։

Կ'ըսի դումա, Նոցա Մեծութիւնների պսակադրութիւնը արժանայիշատակ դարձնելու համար, վճռեց հիմնել ձրի ժողովրդական գրադարան և բաշխել 21,694 ր. ապառիկ։ Ի յիշատակ Կայսր Ալէքսանդր III-ի, դուման վճռեց կառուցանել 11 դպրոցական շինութիւններ, տալ 500 ր. Նպաստ Կայսր Ալէքսանդր III-ի անուան փրկարար կայարան հիմնելու համար և այդ նպատակով իւրաքանչիւր տարի 100 ր. տալ։

ՊԱՐԻԶ, 24 փետրվարի։ Պատգամաւորների ժողովում, զինուորական բիւդժէտը քննելու ժամանակ, սոցիալիստ Ժուարէսս յայտնեց՝ «կուսակցութիւնը խաղաղութիւն է ցանկանում. ազգերը պէտք է հրաժարվեն փոխադարձ նախանձից և ատելութիւնից. իսկ առ այժմ զինուորական կազմակերպութիւնն անհրաժեշտ է, բայց շուտով արդէն նա կը սահմանափակվի երկու տարվայ ծառայութեամբ զօրքերի շարքերի մէջ»։ Մինիստր նախագահ Բրիսօ ցաւակցութիւն է յայտնում, որ զինուորական բիւդժէտը մի քաղաքական աղանդի համար պատրուակ է ծառայում գովազանելու ինտերնացիոնալիզմը։ Բիշար (բուլանժիստ) պահանջում է կառավարութիւնը առաջիկայում զինուորական նաւեր ուղարկելու համար Կիլ, որով ֆրանսիական ժողովրդին հասցնվում է մի ծանր անարգանք, որ նա չէ կրել 1870 թուից յետոյ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի։ Հրատարակված է ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխան Ալէքսէյ Միխայլովիչի մարմնի փոխադրութեան ցերեմոնիալը Սան-Բէմոից Պետերբուրգ, Պետրո—Պավլովկի տաճարում թաղելու համար։ Մարմինը Պետերբուրգ կը հասնի երկուշաբթի։ Թաղումը տեղի կունենայ երեքշաբթի։ Գրանիցա կայարանից մինչև Պետերբուրգի ճանապարհի վրա, դագաղի մօտ պատուաւոր հերթակալութիւն կանեն այն անձինքը, որոնք հանգուցեալ Մեծ Իշխանին ուղեկցում էին նրա արտասահմանեան ճանապարհորդութեան ժամանակ և Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևվիչի ադիւտանտները։ Կը նշանակվեն զօրքեր։ Նահանգական քաղաքներում ցերեկները, տխուր գնացքի կանգ առնելու ժամանակ, հաւաքվում են մարմինը դիմաւորելու համար բարձր հոգևորականութիւնը, նահանգապետը, տեղական զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները, ազնուականութեան և քաղաքային վարչութեան ներկայացուցիչները և պատուաւոր պատնակախումբ է նշանակվում տեղական բերդապահ զօրքերից։ Մեծ Իշխանի նշխարքի փոխադրութիւնը Պետերբուրգ երկաթուղու կայարանից դէպի Պետրոպավլովսկի տաճարը և թաղումը այնտեղ և եթ կատարվելու են Բարձրագոյն ներկայութեամբ, համաձայն Բարձրագոյն հաստատված ցերեմոնիալի յուցմունքներին։

Երէկ Պետերբուրգ եկաւ Իշխան Լոբանով—Բոստովսկի։

Վճռված է ծախսել 100 000 ր. Թիֆլիս-Կարսերեան, Լուկով-Լիբլին երկաթուղիական գծերի հետախուզութիւններ կատարելու և անդրկասպեան երկաթուղու շարունակութեան համար։

ՊԱՐԻԶ, 25 փետրվարի։ Հանրապետութեան նախագահը Թագաւոր Կայսրի անունով ուղարկած հեռագրով յայտնեց ջերմ և անկեղծ ցաւակցութիւն Նորին Մեծութեանը հասած ծանր կորստի համար Մեծ Իշխան Ալէքսէյ Միխայլովիչի վախճանի առիթով։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց պատասխանել, որ շատ զգացված է համակրութեան արտայայտութիւնից և ի սրտէ շնորհակալութիւն է յայտնում հանրապետութեան նախագահին։ Հանրապետութեան նախագահը կերթայ Լիօնի մօտ գտնվող բանակը՝ անձամբ դրօշակներ տալու մագազակարեան արշաւանքի համար Նորից կազմակերպվող զօրքերին։

ԲԵՐԼԻՆ, 25 փետրվարի։ Լինդհէյմում վախճանվեց վիպասան Զախէր-Մազօխ։

ՎԻԵՆՆԱ, 25 փետրվարի։ Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչ և Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլովնա անցան դէպի Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 25 փետրվարի։ Չինաստանից հեռագրում են. եապոնացիները գրաւեցին Գինկով նահանգիստը, Նխուշվանգի մօտ։ Առաջին և երկրորդ եապոնական զօրքերը միացան Գինկովի մօտ։ Չինական գեներալ Սունգ յետ քաշվեց դէպի Տէնխուանկուայ։

Ն պոնական կառավարութիւնը խնդրեց յետաձգել Լի Խունգ Զանգի գնալը մի շաբաթով, որովհետև չէ կարող նրան ընդունել մարտի 19 ից վաղ։

ՆԻՒ ԵՕՐԿ, 25 փետրվարի։ Տամպայից հաղորդում են, որ ապստամբները Կուբա կղզու վրա գրաւեցին Վինալէս, որ գտնվում է դէպի արևմուտք Հավաննայից, սպանեցին 40 մարդ և տեղական բերդապահ զօրքից խլեցին զէնք և պաշարեղէններ և կողոպտեցին քաղաքային վարչութեան շինութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Հրատարակված է, որ Բերլինի ռուսաց դեսպան իշխան Ա. Լոբանով-Բոստովսկի արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ է նշանակված։

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա), 26 փետրվարի։ Նախիջևան անցաւ Ամենայն հայոց Կաթողիկոսը։

ԱԹԷՆՔ, 26 փետրվարի։ Ռուսաց դեսպանը կօրֆու գնաց, ուր կը հանդի, Ալժիր գնալու համար, թագաժառանգ Յէսարեվիչ։

ԼՕՆԴՕՆ, 26 փետրվարի։ Հեռագիր Եոկոհամայից. մարտի 7-ին եապոնացիները գրաւեցին Ինկաու ծովափնեայ բերդերը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 24-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93	ր. 05	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	» 52½	»
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	» 87½	»
Ոսկի — — արժէ . .	7	» 42	
Մաքսային կուպոններ — . .	148	» 25	»
Արծաթ — — — . .	—	» —	»
Բօրսային դիսկոնտ — . .	5	» 7%	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	—	» —	»
— — — — 2-րդ .	—	» —	»
— — — — 3-րդ . .	—	» —	»
4% պետական բէնտա	98	» 75	»
5% ոսկեայ բէնտա 1894 թ. . . .	164	» 50	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	» —	»
— — — 2-րդ —	—	» —	»
— — — 3-րդ —	—	» —	»
— — — 4-րդ —	—	» —	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	228	» —	»
— — երկրորդ —	226	» 50	»
5% պետական երկաթուղ. բէնտա	101⅝	» —	»
4% ներքին փոխառութեան . . .	98⅜	» —	»
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅝	» —	»
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. գրաւ. թղթ. — — .	209	» 25	»
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101⅝	» —	»
4½% գրաւական թղթեր կալուած.	—	» —	»
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	151	» 25	»
— — — թղթադ. .	—	» —	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	102⅛	» —	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	» 50	»
Օդէսայի — —	100⅜	» —	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	99	» —	»
— — Քութայիսի — .	99	» —	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ առաջիկայ կիրակի, մարտի 5-ին, առաւօտեան ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ պիտի կատարվի ԷՋՄԻԱԾՆԵՑԻՈՅ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՍՓՈԽԱՆԻ ԵՒ ՀԱՇՈՒԱՏԵՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ուստի երկրորդ անգամ հրաւիրում եմ նոյն եկեղեցու ծխական ժողովուրդներին շնորհ բերել եկեղեցի մասնակցելու ընտրութեան։

Թիֆլիսի Բ. մասի եկեղեցիների գործակալ՝
Աշոտ քահանայ Թէմուրազեանց

1—1

ԼԱՅՐՅԻԳԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ընկերութեանս պարտք ունեցող անձերուն ժամանակին արդէն նամակով յայտնել է յետոյ, այժմ վերստի հրապարակաւ կը յիշեցնէ, որ փութան իրենց պարտքերը ուղարկել, քանի որ վարչութիւնս ալ շուտով իր տասնամեակի հաշիւը պէտք է հասարակութեան տայ։ (№ 20) 2—4

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՎ

ՀԱՋՈՒԱԳԻՒՏ ԲՈՒՍԵՂԷՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Երևանեան հրապարակի վրա, Տէր-Աստուրովի տանը

ԵՂԲ. ՄԱՐԻԳՕ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԷԼԳԻԱՑԻՑ

Այգեպահութիւն, պտղապահութիւն և ծաղկապահութիւն, պատիւ ունեն ծանուցանել, որ բերել են ահագին քանակութեամբ վաճառելու համար բուսեղէններ և զանազան տեսակ պտղաբեր ծառեր։ Ահագին քանակութեամբ ծաղկասօխեր և թուփեր։ Ցանձն են առնում նմանապէս այգեշէնութիւն և ծառերի ու թուփերի տնկելը, որոնք կը գտնվեն իրանց մօտ։ Ստացված են դարձեալ ուրիշ բուսեղէններ։

(№ 24) 1—5

ԿԻՐ

Քութայիսի ամենալաւ տեսակը, ուղարկվում է վագոններով։ Պատուէրները ընդունվում են Թիֆլիսում։ Դիմել Բօլշայա-Վօդովոզնայա, № 24, տ. Լալաեվի, ինժենէր Լեավդանսկիին, Քութայիսում—Գուստավ Գավրիլովիչ Մալէվսկիին։ (Շ. № 23) 2—3

Երևանեան հրապարակի վրա, Տէր-Աստուրովի տանը, բացված է

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

Նկարիչ Ղազար ԱՐՏԱՁԵԱՆԻ՝ մասնակցութեամբ նկարիչներ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ, ԳԱԲԱԵՎԻ, ՁԱՆԿՈՎՍԿՈՒ, ԿՕԼՋԻՆԻ, ՊԱԳԱՐԵԼՕՎԻ, ՇԱՄՇԻՆԵԱՆԻ, քանդակագործ ԽՕԴՈՐՕՎԻՋԻ և այլոց։

Պատկերահանդէսը բաց է առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյեան 6-ը։

ՄՈՒՏՔԸ արժէ 30 կ., աշակերտների համար 15 կ., մուտքի մի մասը յատկացրած է Թիֆլիսի գեղարուեստական դպրոցին։ (№ 21) 3—5

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՌՈՍՍԻԱ"

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեայ պրէմիա 30 ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. դումարների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին չափաւոր պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական դումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թուի «Россия» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թուի համար—12% է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 9—20

ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում։ (№ 22) 2—30

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՖԹՎԱՆՈՒՄ

Խնդրում ենք հայ խմբագիրներին, հեղինակներին և բարեսէր անձանց, որ իրանց օգնութիւնը չը զլանան Սալմաստի հայոց այս միակ գրադարանին, որի ճոխացումը ըստ զալի կերպով կը նպաստէ գաւառիս կրթական գործին։

Խնդրում ենք նուիրատուներին դիմել այս հասցէով. Persia, Salmast, Սալմաստի հայոց գրադարանին, Հաֆթվանում։

Սալմաստի Հաֆթվան գիւղի գրադարանի վարչութեան։ (№ 10) 5—10

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Февраля 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.